

ըն, այդ առումով  
իր միանգամայն  
մարդու հիշողու-

այլակերպ կենդա-  
տիկ ու տպավո-  
ւղ են հատկապես  
լցել է դա, թե՞ ոչ,  
ի՞նչ, բայց որ աշխ-  
րական, վրացա-  
ւ ու թռչնազրերի

րում իմաստային  
ողի, դպրոցի կամ  
սն այդ տառերը  
նետ:

d Hakopian (Armenia)

ainting and the whole  
n cases, the picture and  
tributing to the entire  
pression means of, the  
: when it is based on a  
suing educational and  
ure painting, especially

д Акопян (Армения)

рмянской миниатюре  
обобственности. В подоб-  
ополняют друг друга,  
ся в художественное  
ебековой миниатюре,  
нения слова, в основ-  
родных проявлениях,  
н данный доклад.

ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ (Հայաստան)  
ՀՀԳԱՍ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՈՒՍՈՒՆԱՍԵՐԻ ԿԵՐՊԱՐԸ ԵՎ ՈՒՍՈՒՆԱՌՈՒԹՅԱՆ ԹԵՍԱՆ  
ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՆԴԱԿՈՒՄ

Վերջին տարիների հետազոտությունների շնորհիվ հայ միջնադարյան խաչքարային և տապանաքարային քանդակում որոշակի հստակությամբ առանձնացվում են մի շարք թեմաներ ու կերպարներ (այգի-խաղողուտը, հավերժ խնջույքը, հավերժ կոնիլը, հոգեհանգստյան պատարագը, ամմխիթար սուգը, «ընտանեկան դիմանկարը», արքան, ռազմիկը, որսորդը, երկրագործը, հովիվը, մայրը, երաժիշտը և այլն) որոնք ավելի լիարյուն ու բազմաբովանդակ են ներկայացնում հայ միջնադարյան մշակույթը<sup>1</sup>: Դրանց շարքը կարելի է դասել նաև ուսումնառության թեման և ուսումնասերի կերպարը<sup>2</sup>:

Խնդրո առարկա պատկերաքանդակներում կերպարները տարբերակվում են երեք հիմնական հատկանիշներով՝ կերպարների համեմատական չափերով (տարիքային չափում), գլխանոցով կամ գլխի ու մազերի հարդարանքով (սեռային չափում) և ուղեկցող իրերով (կերպարային-զբաղմունքային չափում): Այս վերջին հանգամանքը նշանակում է, որ կերպարը հասկանալի է, եթե հասկանալի են նրա ձեռքում գտնվող կամ նրան ուղեկցող ատրիբուտները: Ցավոք, երկար տարիներ «ուսումնասերի» կերպարը ցուցող *պնակիտը* հետազոտողների կողմից ընկալվել է որպես «հայելի», իսկ *զրաչատուրի-քանաքանդակը*՝ «երկվող սրինգ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Հ.Պետրոսյան, Հ.Պիկիչյան, Երաժիշտը և խնջույքը (ըստ XVI-XVIII դդ. տապանաքարային քանդակի) - Երաժշտությունը և պարը պատկերագրության մեջ. միջազգային գիտաժողով, Չեկուցումների հիմնադրություն, Երևան, 1995, էջ 16-17: Գ.Սետրոսյան, X интерпретации группы сюжетных рельефов на хачкарах Арцаха. - ՊԲՀ, 1997, 2, էջ 164-171: Հ.Պետրոսյան, Բռնակոթի հայտնի տապանաքարի հորինվածքի մեկնության շուրջ. - ՀԱ, 2000, էջ 429-456: Նույնի, «Մանուկի» կերպարը ուշմիջնադարյան հայ տապանաքարային քանդակում. - Թուխ մանուկ, Երևան, 2001, էջ 68-84:


<sup>2</sup> Առաջին հրապարակումն այդ մասին տե՛ս Հ.Պետրոսյան, «Ուսումնասերի» կերպարը ուշմիջնադարյան հայ տապանաքարային քանդակում. - Քրիստոնեական Հայաստանի արվեստը, միջազգային գիտաժողով, Երևան, 2001, էջ 43-45:

<sup>3</sup> Տե՛ս Ս.Բարխուդարյան, Գ.Կարախանյան, Հայկական գերեզմանական հուշարձանները և նրանց քանդակները. - ՊԲՀ, 1959, թիվ 4, էջ 206: ԴՀՎ, 4, Գեղարքունիք. Կամոյի. Մարտունու և Վարդենիսի շրջաններ, կազմ. Ս.Բարխուդարյան, Երևան, 1973, էջ 31, 193, 197, 216, 218 և այլն: Գ.Կարախանյան, Հայաստանի միջնադարյան կենցաղային քանդակները (15-17-րդ դդ.). - ԼՀԳ, 1975, 8, էջ 39:

Պետրոսյանի կերպար  
Բրիտանական թանգարանի արվեստ:

Նման ընկալման հետևանքով ի վերջո անընկալելի է մնացել և ինքնին կերպարը, և նույնիսկ որոշ դեպքերում այն բնորոշվել է որպես կին<sup>4</sup>:


«Ուսումնասերի» կերպարը պատկանում է այսպես կոչվող իդեալականացված կերպարների թվին. հանգուցյալը ոչ թե անպայմանորեն այդպիսին է եղել երկրային կյանքում, այլ նա պատկերվում է որպես այնպիսին, ինչպիսին որ պիտի լիներ: «Ուսումնասերը», որպես կանոն, պատկերվում է մանկահասակ տղայի տեսքով (նկ. 1), նա ունի երկար հյուսքեր կամ ծամեր, մի ձեռքում պահում է պնակիտը, որի վրա երբեմն գրություններ են լինում փորագրված: Թանաքաման-գրչատուփը պատկերվում է կա՛ն ձեռքին բռնած, կա՛ն գոտուց կախված, կա՛ն էլ առանձին, բոլոր դեպքերում՝ ոչ գործածության մեջ: Որոշ հորինվածքների թննությամբ կարելի է փաստել, որ թանաքաման-գրչատուփը հանդես է գալիս նաև որպես մի քանի այլ կերպարների բնութագրիչ՝ երաժիշտ-գուսան, դերվիշ և այլք: Եզակի դեպքերում որպես «ուսումնասերին» բնութագրող է հանդես գալիս և գիրքը:



Նկ. 1 «Ուսումնասերը» պնակիտով և գրչատուփով, տապանաքար, Հացառատ, XVI- XVII դդ.:

Ուսումնասերի ամենավաղ քանդակներից մեկը մեզ հաջողվել է առանձնացնել Քանաքեռում 1265 թ. Պետևանի կողմից կանգնեցրած հայտնի որմնափակ խաչքարի հորինվածքում (նկ. 2, 3):


<sup>4</sup> Տե՛ս ԴՀՎ, 4, էջ 193:



Նկ. 2 Պետևանի...


Խաչքար  
հայտնում է  
շերով նրան  
կողմերում,  
երկու կերպ  
մեծայն հա  
նր և նրա ս  
վրա և զար  
է երկնային  
տարածա  
վորվելու է  
ևս երկու  
վածքով  
լայնացող  
ուրեմն նո  
պարը ձս  
գրված է.  
իրը պնակ  
Պետևան

ագել և ինքնին  
կին<sup>4</sup>:  
չվող իդեալակա-  
նորեն այդպիսին է  
նայիսին, ինչպիսին  
վում է մանկահա-  
ծամեր, մի ձեռքում  
նում փորագրված:  
նած, կան գոտուց  
տոթյան մեջ: Որոշ  
աման-գրչատուփը  
բնութագրիչ՝ Իոա-  
«ուսումնասերին»




առատ, XVI- XVII դդ.:

աջողվել է առումն-  
րած հայտնի որմ-



Նկ. 2 Պետկանի խաչքարը, 1265թ.:



Նկ. 3 Երիտասարդը պնակխող,  
Պետկանի խաչքարը, 1265թ.:

Խաչքարի արձանագրության մեջ Պետկանը և իր կին Ավագտիկինը հայտնում են, որ խաչքարը կանգնեցրել են ի հիշատակ իրենց որդիների՝ հիշելով նրանցից միայն մեկի անունը՝ Տողասլան: Խաչքարի քիվին խաչի երկու կողմերում, պատկերված են ձեռքերում մեկական ավելի փոքր խաչեր բռնած երկու կերպարներ (դատելով գլխարկներից՝ երկուսն էլ տղամարդ), որոնք ամենայն հավանականությանը արձանագրության մեջ հիշատակվող Պետկանը և նրա ավագ որդի Տողասլանն են: Քանի որ նրանք տեղադրված են քիվի վրա և զարդերի ետնախորքին, ենթադրելի է, որ վարպետը նրանց պատկերել է երկնային այգում՝ իրական խաչը դիմավորելիս (ըստ քրիստոնեական կատարածաբանության՝ ժամանակների վերջում Քրիստոսի գալուստը նշանավորվելու է խաչի գալուստով): Խաչքարի զարդագոտու վրա պատկերված են ևս երկու կերպարներ, որոնք հագուստներով և զարդարանքով (սրտածև բացվածքով, ծնկներից ներքև ավարտվող լայնափեշ չուխա, բարձր, դեպի վերև լայնացող հարթ գլխարկ, ակննջողեր) չեն տարբերվում քիվի կերպարներից. ուրեմն նույնպես տղամարդիկ են: Կենտրոնական խաչից սօջ զանվող կերպարը ձախ ձեռքով բռնել է երկարապոչ քառանկյուն մի տախտակ, որի վրա գրված է. «Ամիրպեք, Մխիթար»: Այսպիսով, ակնհայտ է, որ արձանագրակիր իրը պնակխո է: Քանի որ խաչքարի արձանագրությունը նշում է, որ Պետկանն ունեցել ուրիշ որդիներ ևս, ավելի քան հավանական է, որ այստեղ

ներկայացված է Պետականի որդիներից մեկը: Չախակողմյան կերպարը ձախ ձեռքով բռնել է սափորը, աջով՝ փողածև գավաթը: Այս կերպ սովորաբար պատկերվում է ծառա-մատովակը, որի դերում երբեմն կարող են հանդես գալ և ընտանիքի կրտսեր տղաները: Կարելի է ամփոփել, որ պատկերաբանողակները ներկայացնում են Պետականին և նրա երեք որդիներին, ընդ որում, որդիներից մեկը ներկայացված է ուսումնասերի կերպարով, իսկ մյուսը՝ մատովակի:

Մեր թեմայի տեսակետից ուշադրության է արժանի 1551 թ. Բռնակոթից մի տապանաքար, որի հորինվածքի հիմնական լեյտմոտիվը մահվան և կյանքի հակադրությունն է (նկ. 4): Դատելով տապանաքարի արձանագրությունից՝ այդ հորինվածքի հիմնական հերոսը մեկից Միրջանն է, որը պատկերված է որպես ընտանիքի գլխավոր: Մահն այս հորինվածքում խորհրդանշված է գերեզմանափոսի մեջ պատկած մի հանգուցյալով, որը երկու ձեռքերով կառչել է մեկից Միրջանի ոտքերից, իսկ կյանքը ներկայացված է մեկից Միրջանի ընտանիքով՝ ի դեմս նրա, նրա կնոջ և որդու: Ամուսինները մի ձեռքով բռնել են



Նկ. 4 Տապանաքար, Բռնակոթ, 1551թ.:

կատնոցը՝ եռանկյուն թերթիկներով և ավելի նկատելի կենտրոնական երկկոն զարդով, կուրծքը զարդարում է նման երկկոնաձև կախիկներից բաղկացած վզնոց, ականջները՝ երկկոն ականջօղերը: Մանչուկը հագել է մինչև ծնկները հասնող չուխա, որն ընդգծվում է գոտիով: Նրա գլուխը հարդարում է գագաթից ելնող և դեպի ձախ թեքվող փարթամ մազափունջը: Վզին ունի պարզ մանյակ: Կարելի է ենթադրել, որ մազափունջը զագաթին անմիջապես մոտ կապված է որոշակի լայնություն ունեցող ժապավենով, ինչն էլ ապահովում է մազափնջի՝ գլխից փոքր-ինչ առանձնացած դիրքը: Մանչուկը հագիվ հասնում է մոր գոտկատեղին և երկու ձեռքերով կառչել է մոր շորի քղանցքից. այս հանգամանքները թույլ են տալիս ենթադրել երեխայի բավականին կրտսեր տարիքը: Մոր և հոր արանքում պատկերված գրչատուփ-թանաքամանը խորհրդանշում է այն հեռանկարը, որն սպասում էր մանուկին:

*Երեք որդի*

այժմ  
կայաց  
Ֆրգուր  
իմոնը  
տեան  
Ֆրգուր  
սանք  
բուն  
դան  
ված է  
գար  
գել է  
առով



գինու  
լով նր  
է իս  
գուց  
կան  
գրչատ  
ներից  
են կ  
առիկ  
դանի  
իմոն

կերպարը ձախ  
երպ սովորաբար  
ող են հանդես գալ  
ատկերաբանդակ-  
, ընդ որում, որդի-  
մյուսը՝ մատովա-

551 թ. Բռնակոթից  
ը մահվան և կյան-  
ձանագրությունից՝  
ը պատկերված է  
խորհրդանշված է  
ու ձեռքերով կառչել  
է մելիք Միրջանի  
մի ձեռքով բռնել են  
, Միրջանը մյուս  
ով մատովակից  
ում է զինու քսար,  
սեղան-սինիների  
դրված են խորո-  
ու այլ ուտելիք-  
Սա քրիստոնեա-  
ու ժողովրդական  
կերացումներ, մի  
ի համադրություն  
ը խաչին ու խնջույ-  
որվում է փրկագոր-  
ան նույն գորություն-  
քինը լրիվ զարդար-  
է. հարթ գլխանոցի  
ից իջնում է ճա-  
տրոնական երկկոն  
կներից բաղկացած  
գել է մինչև ծնկները  
հարդարում է գա-  
ը: Վզին ունի պարզ  
ն անմիջապես մոտ  
նչն էլ ապահովում է  
ուկը հազիվ հասնում  
րի քղանցքից. այս  
ավականին կրտսեր  
ուսի-թանաքամանը  
կին:

Արենիից ծագող տապանաքարային մի հորինվածք (տապանաքարն այժմ պահվում է Եղեգնաձորի երկրագիտական քանդաքանում) արդեն ներկայացնում է գրեթե բուն գործընթացը (նկ. 5): Այստեղ քանդակված են երեք ֆիգուրներ, բոլորն էլ նստած, ինչը ցուցում է, որ նրանք ներկայացված են ինտերյերային զբաղմունքի պահին: Նրանք հագել են երկփեշ արխալուղ, որը տղամարդու՝ ժամանակի ամենատարածված զգեստաձևն էր, առաջին երկու ֆիգուրների մագերի հարդարանքը հար և նման է Բռնակոթի մանուկի սանրվածքին: Ֆիգուրներից առաջինը (թվարկումը ձախից աջ) մի ձեռքով բռնել է գրչատուփը՝ նրան միացած քանաքանանով և, թերև, թուղ կտրելու դանակով, իսկ մյուս ձեռքով՝ գրածողիկը (ստիլը) կամ գրիչը, որի ծայրն իջեցված է պնակիտի վրա: Ութերի մոտ պատկերված է մի թռչուն: Երկրորդ ֆիգուրը աջով բռնել է արդեն գրված կամ նկարագարված թերթը, ձախը պարզել է դեպի զավաթը, որը նրան է մեկնել երրորդ ֆիգուրը՝ բեխավոր մեկը՝ դատելով դերակատարումից՝ թերև ծառան կամ մատովակը, որը ձախով բռնել է



Նկ. 5 Տապանաքար, Արենի, 1595թ.:

զինու սափորը: Չզեստավորման և հարդարանքի առումով երկրորդ ֆիգուրը լրիվ նույնական է առաջինին, ինչը հիմք է տալիս կարծելու, որ ներկայացված է նույն հերոսն իր երկու «զբաղմունքներով»՝ ուսում և խնջույք: Միակ համագույցյալի օգտին է խոսում նաև արձանագրությունը. «Այս է հանգիստ Ժամկումին, որ է որդի պարոն Վարամին, թվ. :ՌԽԴ: (1595)»:

Շողագա վանքի մի հարթ տապանաքարի վրա պատկերված հանգուցյալի երկար ծամերն իջնում են ուտերից ներքև, նա հազիվ ունի կրունկներից քիչ վերև ավարտվող պարեգոտ, կետագարդ գոտի, ձեռքերը խաչված են կրծքին, իսկ արձանագրությունը հայտնում է. «Այս է հանգիստն նսկան սարկօաքին, որ :ԺԵ: ամեսաց փոխեցօ. թվկ. ՉՉԴ: (1535)»: Թեև այս քանդակի պատանին պնակիտ կամ գրչատուփ չի կրում, բայց սա մեզ համար խիստ կարևոր տեղեկություն է թե՛ տարիքային և թե՛ կարգավիճակային

<sup>5</sup> ԴՀՎ, 4, էջ 244, նկ.

առումով: Նկատենք, որ մեր «ուսումնասեր» բոլոր կերպարներն էլ ծանակիր են:

Նման օրինակների թիվը կարելի է բազմապատկել, սակայն բերվածն էլ բավարար է եզրակացնելու, որ, որպես կանոն, պնակիտով, գրչածողով, գրիչ-քանաքամանով (երբեմն էլ գրքով) պատկերվում են մանկահասակ հանգուցյալները:

Ինչպես տեսնում ենք, մանկահասակ հերոսները մեծ թիվ են կազմում հատկապես XV–XVIII դդ. տապանաքարային քանդակում: Այս կերպարը շատ մանրամասնորեն կարելի է վերականգնել, ի մասնավորի, Գեղարքունիքի տապանաքարային քանդակների օգնությամբ, ուր փոքր չափի տապանաքարերի զգալի մասը ներկայանում է մեկ, երկու, իսկ եզակի դեպքում՝ նաև երեք հյուսք ունեցող «հերոսներով»<sup>6</sup>:

Այսպիսով, կարելի է հավաստել, որ տապանաքարային քանդակի իդեալական հերոսներից մեկն էլ ուսումնասերն է՝ զինված գրչության պարագաներով ու գրչությամբ պարապելիս, ինչն էլ իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ խոսք է գնում հենց գրել-կարդալ սովորելու, այլ ոչ թե ձեռագիր արտագրելու կամ գրչությամբ զբաղվելու մասին:

Բնունիսի խաչքարերից մեկի արձանագրությունը տալիս է նման «հերոսի» խոսքային նկարագիրը. «...ԹՎ. :ՉԶ: (1331): Երկրպագողը Աստուածընկալ սուրբ խաչիս, խնդրենք մեք՝ Մարտիրոս, Վանենի, վասն քաղցր և անուշատես արեգակնաման և ծաղկատեսիլ զուսակին մեր Արապելին, որ էր աստուածային շնորհաւքն լցել այնչափ, որ ի կէս տարոջն զհայ գիրս և ի մի ամսոջն զմուղալին ուսել, զտեսողսն իւր զամէն զարմացուցանէր և ի սէրն իւր որդորէր, ամենիցուն լինէր սիրելի, պիտանի՛ պարոնաց, շինակնաց...»<sup>7</sup> (Ով երկրպագողներ աստվածընկալ սուրբ խաչիս, մենք՝ Մարտիրոս և Վանենիս խնդրում ենք ձեզ հիշել մեր անուշատես, արեգակնաման և ծաղկատեսիլ զավակին՝ Օրապելին, որն այնքան էր լցված աստվածային շնորհով, որ կես տարում հայոց գիրը և մեկ ամսում մոնղոլական գիրը սովորեց, որ իրեն տեսնողներին զարմացնում էր, բոլորին դառնում սիրելի և պիտանի թե՛ պարոններին և թե՛ շինականներին...):

Թվում է՝ արձանագրությունն այս դեպքում ավելին է ասում (հատկապես մեր կողմից ընդգծված հատվածը – Հ.Պ.), քան ցուցադրում է տապանաքարային քանդակը. թե՛ պարոնի և թե՛ շինականի (և ընդհանրապես ողջ հայ հանրության) համար ուսումնառությունը իդեալական կենսաձև է, իսկ ուսումնասերը՝ իդեալական մարդ:

<sup>6</sup> Մանրամասն տես՝ Հ. Պետրոսյան, «Մանուկի» կերպարը ուշմիջնադարյան հայ տապանաքարային քանդակում, էջ 75–83:

<sup>7</sup> ԴՀՎ, 2, Չանգեզուր, կազմ. Ս. Բարխուդարյան, Երևան, 1961, էջ 115–116:

On  
teaching in  
are defined.  
presented  
inclusion  
manifestatio  
when the t

фигура  
обучения.  
умерный  
рассмотр  
фическая  
сов армян  
процесс, а

Hamlet Petrosyan (Armenia)

THE IMAGE OF THE STUDENT AND THE SUBJECT OF TEACHING  
IN THE MEDIEVAL ARMENIAN FIGURATIVE RELIEF

On the basis of thorough iconographical analysis the image of the student and the subject of teaching in the medieval Armenian figurative relief (on *khachkars* and tombstones) for the first time are defined. It is proved that this image belongs to the so called ideal images, i. e. the dead person is presented not as he was but as he should have been. The thorough investigation of this subject, with inclusion of vast narrative and epigraphic materials, allowed to make a conclusion on popular manifestations of one of the main complexes of the Armenian identity – the letters and the book, when the teaching was perceived as an ideal process and the student – as an ideal man.

Гамлет Петросян (Армения)

ОБРАЗ УЧАЩЕГОСЯ И ТЕМА ОБУЧЕНИЯ  
В СРЕДНЕВЕКОВОМ АРМЯНСКОМ ФИГУРАТИВНОМ РЕЛЬЕФЕ

На основе подробного иконографического анализа впервые в средневековом армянском фигуративном рельефе (на *хачкарах* и надгробных плитах) выделяются образ учащегося и тема обучения. Доказывается, что данный образ принадлежит к числу т.н. идеальных образов, т.е. умерший представлен не таким, каким он был, а таким, каким он должен был быть. Подробное рассмотрение последнего обстоятельства с вовлечением разнообразных нарративных и эпиграфических данных, позволяет делать вывод об общенародном проявлении одного из комплексов армянской идентичности – письма и книги, когда обучение воспринимается как идеальный процесс, а учащийся – идеальный человек.

երն էլ ծամակիր

ակայն բերվածն էլ  
լ, գրչածողով, գրիչ-  
ահասակ հանգուց-ծ թիվ են կազմում  
ում: Այս կերպարը  
ավորի, Գեղարքու-  
որը չափի տապա-  
գակի դեպքում՝ նաևրային քանդակի ի-  
գրչության պարա-  
իմք է տալիս եզրա-  
այլ ոչ թե ձեռագիրը տալիս է նման  
Երկրպագողը Աս-  
անենի, վասն քաղցր  
ին մեր Արաբելին, որ  
րոջն զհայ գիրս և ի  
սցուցանէր և ի սէրն  
նաց, շինակնաց...»<sup>7</sup>  
արտիրոսս և Վանե-  
նման և ծաղկատեսիլ  
յին շնորհով, որ կես  
վորեց, որ իրե՛ն տես-  
պիտանի թե պա-է ասում (հատկապես  
րում է տապանաքա-  
հանրապես ողջ հայ  
նսածն է, իսկ ուսում-

արյան հայ տապանաքա-